

Այլ հայացք

ALTERNATIVE VIEW



ՆԱԽԱԲԱՆ

«Այլ հայացք» նախագիծը շարունակությունն է այն աշխատանքի, որն «Ինտերնյուն» իրականացնում է Հարավային Կովկասում երկար տարիներ: Նախագծի անունն արդեն շատ բան է ասում. մենք փորձել ենք օգնել երիտասարդ մարդկանց այլ տեսանկյունից նայել հակամարտությանը, անցած պատերազմին, մարդկային ճակատագրերին, այսօրվա իրադարձություններին: Այն տեսանկյունից, որը կարող է օգնել լուծումներ գտնել և երկու հասարակությունների միջև կամուրջներ գցել: Արդյո՞ք մենք հասանք մեր նպատակին: Չենք կարող միանշանակ պատասխանել այս հարցին: Բայց նախագիծը մասնակիցների համար հնարավորություններ բացեց այդ այլընտրանքային հայացքի համար:

Առաջին և հիմնական խնդիրը, որը ծրագիրն իրականացնողները դրել էին իրենց առաջ, այնպիսի հարթակի ստեղծումն էր, որտեղ հակամարտության մեջ ներգրավված երկու երկրների երիտասարդները, մասնագիտական առաջին քայլերն անելով, միաժամանակ կարողանային շփվել իրար հետ և խոսել իրենց հասարակությունների խնդիրների մասին վավերագրության լեզվով:

Երկրորդ՝ ոչ պակաս կարևոր խնդիրը հատեղ ստեղծագործական աշխատանքի համար հնարավորությունների ստեղծումն էր: Մեր համոզմամբ՝ նման համագործակցությունը հող է նախապատրաստում «բշնամու» կերպարի հաղթահարման համար, ինչպես նաև օգնում է հրաժարվել այն կարծրատիպերից, որոնք կան ինչպես Հայաստանում, այնպես էլ՝ Ադրբեջանում: Չէ՞ որ հակամարտության տարիների ընթացքում հարևան երկրում սպ-

րող իրական մարդկանց հետ շփվելու հնարավորություն չեն ունեցել անգամ նրանք, ովքեր ժամանակին կողք կողքի են ապրել: Իսկ երիտասարդները ոչ միայն շփվելու փորձ չունեն, այլև հաճախ հրաժարվում են նման հնարավորությունից:

18-25 տարեկան **20** երիտասարդներ՝ ուսանողներ, լրագրողներ և ռեժիսորներ Հայաստանից և Ադրբեջանից, դարձան նախագծի մասնակիցներ: Դա այն սերունդն էր, որը ծնվել էր 80-ականների վերջին, 90-ականների սկզբին, երբ դարաբաղյան հակամարտությունը վերածվել էր լայնածավալ պատերազմի: Նույն տարիներին փրկվում էր նաև Խորհրդային կայսրությունը, նրա հետ մեկտեղ՝ մեզ համար սովորական դարձած կապերը, պատկերացումները:

Շնորհիվ «Այլ հայացքի»՝ «*Ոչ պատերազմի, ոչ խաղաղության*» սերունդը հնարավորություն ստացավ շփվելու հակամարտության «*մյուս կողմի*» իր սերնդակիցների հետ և միասին «*լրագրողական դիվանագիտության*» ճանապարհ անցնելու: Միասնական ստեղծագործական աշխատանքը նշանակում էր ոչ միայն ընդհանուր լեզու գտնել, այլ հաճախ նաև՝ փոխգիշումների գնալ, քանի որ ֆիլմերի մեծ մասը այս կամ այն կերպ առնչվում էին հակամարտության թեմային:

Նախագծի իրականացման մեթոդաբանական համար որոշիչ էր այն փաստը, որ այսօր շատ դժվար՝ գործնականում անհնար է ադրբեջանցիների համար Հայաստան, իսկ հայաստանցիների համար Ադրբեջան գնալը: Այդ պատճառով էլ շատ ֆիլմեր գուցահեռ

նկարահանվել են երկու երկրներում: Բայց հեղինակները և նրանց խորհրդատուներն անընդհատ կապի մեջ են եղել՝ քննարկելով թեմաները, գաղափարները, պատմությունները, ծագած խնդիրները: Որոշ ֆիլմեր համատեղ նկարահանվել են դարաբաղյան հակամարտության համար ավանդաբար չեզոք երկրում՝ Վրաստանում:

2011թ-ի դեկտեմբերին Թբիլիսիում կազմակերպվեց «Այլ հայացք» աշխատանքային փառատոնը: «Ռուսթավելի» կինոթատրոնում ցուցադրվեցին նախագծի շրջանակում պատրաստված բոլոր ֆիլմերը, երիտասարդ հեղինակներին էլ մրցանակներ հանձնվեցին: Ֆիլմերի գնահատման համար ստեղծվել էր երկու երկրների պրոֆեսիոնալներից կազմված հանձնաժողով: «Այլ հայացք» անվանակարգում գլխավոր մրցանակը ստացավ «Ընկեր: Ծանոթ... Ընկե՞ր» ֆիլմը: «Նոր հայացք» անվանակարգում հաղթեց «Սեփական, օտար պարերազմ» ֆիլմը, իսկ «Համարեղ հայացք» անվանակարգում՝ «Մարդների կախարդանք»: «Հարուկ հայացք» անվանակարգում առանձնացվեց «Ընկերներ առանց սահմանի» ֆիլմը, որը հանձնաժողովի կարծիքով շատ համահունչ էր նախագծի ոգուն:

Ստեղծագործական աշխատանքի ավարտը միշտ նաև նոր սկիզբ է: Ֆիլմերը սեփական ճանապարհն են սկսում իրենց երկրների հեռուստաալիքներով, հաճախ ցուցադրվում են նաև արտերկրում՝ տարբեր փառատոնների ժամանակ, տեղադրվում են համացանցում: Հեղինակներն էլ իրենց ստեղծագործական, հաճախ նաև խաղաղարար ճանապարհն են սկսում:

Այս գրքույկին կից կա նաև խոսակավառակ՝ նախագծի շրջանակում պատրաստված բոլոր

ֆիլմերի տեսագրություններով: Գրքույկի մեջ կգտնեք նաև նախագծի խորհրդատու, հակամարտությունների հարցերով փորձագետ, փառատոնի հանձնաժողովի անդամ Նատալյա Միրիմանովայի վերլուծությունը ֆիլմերի մասին: Բացի այդ՝ այստեղ կարող եք ծանոթանալ բոլոր ֆիլմերի համառոտ բովանդակությանը և նրանց հեղինակների հետ՝ կարդալով նրանց կարճ տպավորությունները համատեղ աշխատանքի և ֆիլմերի պատրաստման ընթացքի մասին:

«Այլ հայացք» նախագիծը համատեղ իրականացրել են Մամուլի աջակցության «Ինքերնյուս» հասարակական կազմակերպությունը (Հայաստան) և «Ինքերնյուս» հասարակական ասոցիացիան (Ադրբեջան)՝ Վրաստանի Ինքերնյուս հիմնադրամի կազմակերպական աջակցությամբ: «Ինքերնյուսի» գրասենյակները Հարավային Կովկասի երկրներում առանձին տեղական կազմակերպություններ են, որոնք աջակցում են ազատ և անկախ տեղեկատվության ստեղծմանն ու տարածմանը՝ ստեղծագործական, նորարարական մտտեցումների միջոցով, ինչն իր հերթին նպաստում է ժողովրդավարության զարգացմանն ու բազմաշերտ ու ներդաշնակ հասարակության ձևավորմանը:



ԸՆԿԵՐ: ԾԱՆՈԹ... ԸՆԿԵՐ

Հեղինակներ՝ Արթուր Խաչատրյան, Գուրնա Սաֆարի



Ֆիլմը հայ և ադրբեջանցի երկու երիտասարդի մասին է, ովքեր մոտ ընկերներ են եղել Ռուսաստանում ապրելու տարիներին: Միմյանցից բաժանվելուց երեք տարի անց մեր նախագծի շնորհիվ նրանք հանդիպեցին Թբիլիսիում, որ հասկանալի, փոխվել են արդյո՞ք իրենց հարաբերությունները, թե՞ մնացել են նույնը: Ֆիլմի ընթացքում կիմանաք, թե ինչ էին մտածում և ինչ էին սպասում տղաները մինչև հանդիպումը, կտեսնեք նրանց ամուր գրկախառնությունը հանդիպման ժամանակ և կծանոթանաք նրանց զգացմունքներին արդեն հրաժեշտից հետո:



Արթուր Խաչատրյան
Հայաստան

Ես այս նախագրծում իմ մասնակցությունը երկու մասի եմ բաժանել: Նախ, մասնագիտական առումով բավականին հրմտացա, զարգացում ապրեցի. դա զգացի թե՛ վարպետության դասերի, թե՛ նկարահանումների ընթացքում: Եվ երկրորդը՝ կարծում եմ՝ ես ճանաչեցի ինքս ինձ... Կայացավ մի հանդիպում, որին ես սպասել էի շատ երկար ժամանակ՝ 3 տարի: Ես այնքան բան զգացի, որ հիմա երևի չկարողանամ բառերով փոխանցել: Տեսա մի մարդու, ում ուզում էի տեսնել: Վերապրեցի այն կյանքը, որը ես կորցրել էի: Մի քիչ հետ վերադարձա, դեպի մանկություն գնացի: Գոհ եմ, թե՛ դժգոհ՝ արդեն ուրիշ հարց է: Բայց ուզում եմ հարյուր տոկոսով վստահեցնել, որ ընկերոջս հետ այս հանդիպումը ինձ պետք էր: **Ընկերոջս** հետ՝ ընդգծեմ այս բառը:

Թբիլիսյան հանդիպման ժամանակ ես և իմ հայ գործընկերը մշակեցինք մեր աշխատանքային պլանը և վերադարձից հետո ինտերնետով շարունակում էինք ճշտել նույնիսկ ամենաանշան մանրամասները, աշխատում էինք համատեղ և կազմակերպված: Մեր ջանքերը գնահատվեցին ըստ արժանվույն՝ ֆիլմը ճանաչվեց լավագույնը և ստացավ փառատոնի գլխավոր մրցանակը: Չնայած երկու ազգերի հակամարտությանը, մեր ֆիլմի հերոսները շարունակում են ընկերություն անել, թեև ամեն մեկն իր դիրքորշումն ունի այդ մասին: Ֆիլմում նրանք խոսում են իրենց միավորող, ոչ թե բաժանող պահերի մասին: Ինչպես ասել է Ֆրոյդը, քաղաքակրթությունն արարեց այն մարդը, որը քարի փոխարեն վիրավորանք շարտեց: Ես էլ եմ մտածում, որ խնդիրները կարելի է լուծել քննարկելով, այլ ոչ թե ուժով:



Գուրնա Սաֆարի
Ադրբեջան



ՄԱՏՆԵՐԻ ԿԱԽԱՐԴԱԼՔԸ

Հեղինակներ՝ Իլկին Հուսեյնով, Մարի Մխիթարյան



Ֆիլմը Թբիլիսիի Մատների թատրոնի և այն ստեղծող Բետ Կուպրեիշվիլիի մասին է: Պարզվում, է, որ դերասանի միայն ձեռքերը, ավելի ստույգ՝ նրա մատները կարող են մտքեր և զգացմունքներ հաղորդել հանդիսատեսին և կերպարներ՝ նույնիսկ շեքսպիրյան հերոսներ, ստեղծել բեմի վրա: Իսկ դիմակահանդեսը կառավարում է, այսինքն՝ բոլոր դերասաններին իր բուռն է հավաքում շատ խիստ, միաժամանակ շատ սիրված մի մարդ, ում այստեղ բոլորը *Գլխավոր մար* են անվանում:

Այս նախագիծն, առաջին հերթին, պրոֆեսիոնալ մարդկանց հետ աշխատելու հնարավորություն էր: Հնարավորություն լավ աշխատանք


անելու ու լավ ֆիլմ ունենալու, որովհետև կողքիդ կան մարդիկ, ովքեր իրոք կօգնեն, որ ուզածիդ հասնես: Աղբբեջանցիների հետ Թբիլիսիում միասին լավ ժամա-



Մարի Մխիթարյան
Հայաստան

նակ անցկացրեցինք: Ամենակարևորը՝ կարողացա շփվել այն մարդկանց հետ, ում թշնամի էի համարում: Կարողացա ընդհանուր լեզու գտնել: Հիմա ընկերաբար շփվում ենք իրար հետ, ու դա շատ լավ է: Ինչ-որ մի սահման էր դրված մեր միջև, որը կարողացանք հաղթահարել: Նախկինում ես մտածում էի՝ հնարավոր չէ, որ փողոցում աղբբեջանցու տեսնեմ ու կարողանամ ինձ համարժեք պահել:

Համատեղ աշխատանքի ժամանակ իրար նկատմամբ անվստահությունն ու հակակրանքը, կարելի է ասել, չքացան: Երկու կողմից էլ բավական բարյացակամ երիտասարդներ էին ընտրված, հենց սկզբից էլ ոչ ոք ոչ մեկի հետ «չէր պատերազմում»: Մեր փորձը ցույց տվեց, որ հայերն ու աղբբեջանցիները կարող են այսօր գտնվել իրար կողքի և նույնիսկ աշխատել իրար հետ: Դա ապացուցում է, որ մեր հակամարտությունը արհեստական բնույթ է կրում: Համատեղ աշխատանքը նպաստեց մեր մերձեցմանը: Ամեն մեկս մեր կարծիքին մնալով՝ սկսեցինք ավելի հանդուրժողաբար վերաբերվել հակառակ կարծիք ունեցողներին: Եթե խնդիրներ կան, դրանք պետք է լուծել՝ հաշվի առնելով բոլոր կողմերի շահերը: Բոլորին բավարարող արդյունք՝ դա է հակամարտության լուծումը:



Իլկին Հուսեյնով
Աղբբեջան

ՍԵՓԱԿԱՆ, ՕՏԱՐ ՊԱՏԵՐԱԶՍԸ

Հեղինակներ՝ Յանա Շախրամանյան, Անար Ազան



Ղարաբաղյան պատերազմին մասնակցել են ոչ միայն հայերն ու ադրբեջանցիները, այլև՝ Հայաստանում և Ադրբեջանում ապրող ազգային փոքրամասնությունները: Այս ֆիլմը պատմում է ռուսների մասին, որոնք հակամարտության մեջ ներքաշված երկրների քաղաքացիներ հանդիսանալով՝ մասնակցել են ո՛չ իրենց, բայց միևնույն ժամանակ՝ իրենց պատերազմին:

Ճիշտն ասած, մինչև այս նախագծին մասնակցելը ես շատ ավելի պահպանողական ու ազգայնական գաղափարների տեր էի: Չեմ ասի, որ ամբողջովին փոխվել եմ, բայց շատ բան տեղն ընկավ: Եթե առաջ ադրբեջանցին ինձ համար ինչ-որ ընդհանրական կերպար էր, այսինքն՝ իրենք ինձ համար մարդիկ էին, ովքեր պատերազմի ժամանակ կանգնած էին մեր դիմաց, ում հետ մենք պետք է կռվեինք և հաղթեինք, ապա հիմա ես հասկացա, որ ադրբեջանցիները տարբեր են: Մենք հանդիպեցինք տասը երիտասարդների հետ, ու տասն էլ մեկը մյուսին նման չէին: Չեմ ասի՝ լավն էին, վատն էին: Համենայն դեպս, բոլորը մի կերպար չէին, բնավորություն ունեին: Կային և՛ շատ ազատ մտածելակերպի տեր մարդիկ, և՛ ավելի փակ ու պահպանողական: Ամեն դեպքում նախագծի շնորհիվ պատմության գրքերի մեջ գրածից ու



Յանա Շախրամանյան
Հայասրան

հեռուստացույցով լսածից բացի, ամենը փորձեցի տեսնել իմ աչքերով: Ոչ թե լսել, թե ինձ ինչ կասեն, այլ փորձել ինքնուրույն կողմնորոշվել ու հասկանալ՝ ինչ մտածել և ինչպես վերաբերվել:



ԱԿԱՆԱՊԱՏՎԱԾ ԴՐԱԽՏ

Հեղինակներ՝ Գուրբան Բունյաթով, Մարիամ Սարգսյան



Այս ֆիլմը պատերազմի հետևանքների մասին է՝ այն մասին, թե ինչ դժոխքի է վերածվում խաղաղ բնակիչների կյանքը ռազմական գործողությունների ժամանակ: Մարդիկ պայթում են ականների վրա, կորցնում իրենց առողջությունը, ծնողներին, բայց չնայած այդ ամենին՝ իրենց մեջ ուժ են գտնում լիարժեք կյանքով ապրելու՝ առանց կսկիծի և ստեղծության: Այս ամենը՝ կոնկրետ մարդկանց օրինակով. հայ տղայի, ով կորցրել է տեսողությունը, և ադրբեջանցի երիտասարդի, ով կորցրել է ինքնուրույն տեղաշարժվելու հնարավորությունը:

Ինձ թվում է՝ պետք է ավելի անկեղծ լինել՝ չխուսափել Ղարաբաղի մասին քննարկումներից, ինչպես սովորաբար անում ենք ադրբեջանցիների հետ հանդիպումների ժամանակ: Պետք է քննարկել խնդիրը, որպեսզի գանք վերջնական եզրակացության: Կարող է առաջին անգամից չստացվի, կարող է վեճ լինի, բայց միայն այդ դեպքում է հնարավոր մի բանի հասնել: Լռելով կամ ուղղակի դրա մասին չխոսելով, մտածելով, որ ավելի լավ է ոչ մի բան չասեմ, քան հանկարծ իմ գործընկերոջ հետ վիճեմ, ձևական հարաբերություններով՝ ոչ մի բան չի փոխվի:

Երբ ես առաջին անգամ մասնակցեցի նման ծրագրի, փոքր էի՝ 13-14 տարեկան... Ու ավելի ոգևորված էի: Այդ ժամանակ բոլորս ավելի

անկեղծ էինք, ու ես ունեի շատ լավ ընկերներ, որոնց հետ մինչև հիմա էլ շփվում եմ ու շատ սիրում եմ, վատահ եմ՝ իրենք էլ ինձ: Բայց այդ ընկերները տարիքի հետ քչանում են: Որքան մեծանում ենք, այնքան ավելի շատ է քարոզչությունն ազդում մեզ վրա... Չգիտեմ, ինչն է փոխվում, բայց պակասում է ընկերությունը, ու շփումներն ու քննարկումները դառնում են ավելի քաղաքական՝ արդեն հարաբերվում ենք որպես հայ ու ադրբեջանցի: Դա շատ



Մարիամ Սարգսյան
Հայաստան

վատ է: Բայց, ամեն դեպքում, այս շփումները շատ բան են տալիս, որովհետև միայն դրանց արդյունքում է հնարավոր որևէ բան փոխել: Եթե կղզիանանք, մեկուսանանք ամեն մեկս մեր մեջ ու ատենք իրար, դա ոչ մի բանի չի հանգեցնի, բացի պատերազմից:

ՌՈՍԱԼՏԻԿՆԵՐ ՈՐՈՆԵԼԻՍ

Հեղինակներ՝ Անահիտ Ալեքսանյան, Էդդար Իսրաֆիլով



Ֆիլմի հեղինակները փորձել են թրիլսայան փողոցներում գտնել այն անուղղելի երագողներին, ովքեր այստեղ ներկայանում են որպես արվեստագետներ: Միայն պարզ հետաքրքրասիրությունը չէր, որ դրդել էր նրանց գտնել Թրիլսիսի փողոցային արտիստներին: Հեղինակները ցանկանում էին հասկանալ, թե ինչն է ստիպում դերասանին, երգչին, նկարչին դուրս գալ փողոց և գլխարկը դնել անցորդների առաջ. միայն դրան հավաքե՞լը, թե՞ իրենց ոգեշնչանքը մարդկանց ներկայացնելու ցանկությունը:

Պետք է ճանաչել, շփվել ու հարգել իրար: Իսկ կոնֆլիկտը, ինձ թվում է, ժամանակի ընթացքում, սերնդափոխության հետ պետք է լուծվի: Երբ ֆիլմի համա-



Անահիտ Ալեքսանյան
Հայաստան

հեղինակի հետ մենք Թրիլսիսում էինք նկարահանումների համար, հեշտ ու արագ լեզու գտանք: Կարող եմ ասել, որ ես նրա կողմից հարգանք զգացի իմ նկատմամբ: Բայց երբ մեզ ներկայացրեցին մեր հերոսներից մեկի ընկերոջը, նա ասաց. «Հայ և աղբբեջանցի՞, դա հնարավո՞ր է»: Անգամ հրաժեշտ տալիս՝ նա, միևնույնն է, կրկնում էր. «Բայց ո՞նց կարող է այսպես լինել»: Մենք դրան ծիծաղով արձագանքեցինք:

Այս նախագծի հիմնական նպատակը համագործակցության ոգի ստեղծելն էր՝ միմյանց հասկանալու, փոխզիջման գնալու և կարծրատիպերից ազատվելու համար: Կարծում եմ, այդ նպատակն իրականացավ, քանի որ մնացած պահեր շատ եղան մասնակիցների հարաբերություններում: Հավանաբար համեստ չի լինի, եթե ասեմ, որ մեր ֆիլմը ստացված է, բայց այդպես է: Այն ասում է, որ դրական տրամադրվածությունը հրաշալի է, քանի որ յուրաքանչյուր կոնֆլիկտի լուծում հիմնվում է լավատեսության վրա: Ես կարծում եմ, որ բարոյականության և մարդասիրության վրա հիմնված լուծումները կբավարարեն բոլոր կողմերին և այդպիսով կլուծեն խնդիրը:



Էդդար Իսրաֆիլով
Ադրբեջան

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՀԱՆԳՍՏԱԼՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ

Հեղինակներ՝ Գումրու Արդուլլազադե, Արամ Կիրակոսյան



Ֆիլմը պատմում է տարբեր մասնագիտություններ և հետաքրքրություններ ունեցող երիտասարդների մասին, ովքեր տարբեր մոտեցումներ ունեն նաև իրենց հանգիստը կազմակերպելու հարցում, հատկապես՝ զիջերային ժամերին: Օրինակ, քանդակագործը սիրում է երգեր հորինել և շատ բարձր ձայնով երգել դրանք զիջերները կիթառի նվագակցությամբ, իսկ հայտնի ռեփերը գերադասում է պարզապես քայլել զիջերային քաղաքի փողոցներով...



*Գումրու Արդուլլազադե
Ադրբեջան*

Ֆիլմ նկարահանել, միաժամանակ հանդիսանալով դրա սցենարիստն ու ռեժիսորը, իսկական հաճույք էր: Սա իմ առաջին ֆիլմն էր, ընթացքում բաներ սովորեցի, որոնց մասին պատկերացում էլ չունեի: Այդ գիտելիքներն ու հմտությունները ինձ համար խթան են, որ էլի փորձեմ ուժերս այս գործում: Մինչ այդ ես երբեք չէի շփվել հայերի հետ և բոլորովին այլ պատկերացում ունեի նրանց մասին: Իսկ դասընթացից հետո հասկացա, որ Հայաստանն ու Ադրբեջանն ավելի մոտ են իրար, քան մնացած բոլոր հարևան երկրները: Ինչպես եղել ենք հարևաններ, այդպես էլ կմնանք, արդեն ոչինչ չես փոխի: Եվ ես մտածում եմ, որ մեր մեջ եղած հակամարտությունը պետք է լուծվի քաղաքակիրթ ճանապարհով, այսինքն՝ հանդիպումների, քննարկումների, մտքերի փոխանակման և բանավեճերի միջոցով:

Ես չէի ճանաչում ոչ մի ադրբեջանցու ու ինքնաբերաբար մտածում էի, որ իրենք պետք է մեր թշնամին լինեն: Երբ ճանաչում ես, տեսնում ես, որ իրենք էլ մսից, արյունից, նույն ձևի մարդիկ են: Կան լավերը, կան վատերը: Ոնց որ մեր երկրում՝ ամեն մեկի հետ ընկերություն չես անի, չէ՞: Ամեն մեկին չես ասի՝ լավն է: Ինձ համար դա էր կարևորը: Ես ճանաչեցի նրանց որպես մարդ: Մենք միասին շատ լավ ժամանակ ենք անցկացրել Վրաստանում: Դրանից հետո մարդուն չես էլ կարող թշնամի համարել: Այս նախագիծն ինձ նախ՝ շփման հնարավորություն տվեց, երկրորդը՝ մասնագիտական մեծ փորձ, որը ես չունեի ու որի համար շնորհակալ եմ: Ես ընդհանրապես ոչ մի բան չգիտեի ու ընթացքում կամաց-կամաց սովորեցի: Հուսով եմ՝ ադրբեջանցի մասնակիցներին էլ նույնն է տվել նախագիծը:



*Արամ Կիրակոսյան
Հայաստան*

ԿԻՆԸ ՊԱՏԵՐԱԳՄՈՒՄ

Հեղինակներ՝ Շարմաղ Սաթունց, Գլույարա Ազիմզադե



Ֆիլմում ներկայացված են երկու ճակատագիր, երկու կին, ովքեր պատերազմի ժամանակ տղամարդկանց կողքին էին ոչ թե բուժքրոջ, այլ նրանց հետ հավասար կռվողի կարգավիճակով: Երկու հերոսուհին էլ այժմ վերադարձել են խաղաղ կյանքին: Ֆիլմն այն մասին է, թե ինչ են զգացել նրանք պատերազմի տարիներին, երբ պետք էր զենքը ձեռքին պաշտպանել հայրենիքը:

Երևի ինձ՝ զուտ որպես լրագրողի համար, պետք էր, որ մասնակցեմ այս նախագծին և հասկանամ իրավիճակը: Հասկանամ, թե Ադրբեջանում մարդիկ ինչպես են մտածում, թե այնտեղ երիտասարդությունը ինչով է զբաղված ու հետաքրքրված: Այս նախագծում մասնակցությունը, կարելի է ասել, որ ինձ հարյուր տոկոսանոց արդյունք տվեց, որովհետև ես ստացա այն ամենը, ինչ ակնկալում էի: Կարծում եմ, որպես լրագրող, շատ մեծ փորձ եմ ձեռք բերել այս նախագծից: Մեր շփումը ոչ միայն Վրաստանում է եղել, այլ նաև սոցիալական կայքերի միջոցով: Իհարկե, շատ լավ բաներ եմ տեսել իրենցից. չեմ կարող ասել, որ նման բան չի եղել: Եվ կուզեի ավելի շատ շփվել ադրբեջանցիների հետ, որպեսզի ավելի լավ հասկանամ նրանց: Այսպիսի նախագծերը հաստատ պետք են, թեև կան առանձին հարցեր, որոնք անլուծելի են մնում:



Շարմաղ Սաթունց
Հայաստան

ՍԻՐԵԼԻ ԹՇՆԱՍԻ

Հեղինակներ՝ *Վուգար Աղիզյոզալով, Լիանա Սմբատյան*



Պատմություններ այն մասին, թե ինչպես են մարդիկ իրար օգնել՝ աղքեջանցիները հարևան հայերին, իսկ հայերը՝ ծանոթ աղքեջանցիներին՝ այն տարիներին, երբ «թշնամուն» ձեռք մեկնողը կարող էր գլխով պատասխան տալ դրա համար... Ինչպես ասում է ֆիլմի հերոսուհիներից մեկը, ոչինչ չի մոռացվում՝ ո՛չ լավը, ո՛չ վատը:



*Վուգար Աղիզյոզալով
Աղքեջան*

Երբ տեսնում ես, որ սահմանից այն կողմ գտնվող «մարդակերը» նույնչափ «լավ» է մտածում քո մասին, հասկանում ես՝ որքան տարբեր ենք, այդքան էլ նման ենք: Թեև մեր ֆիլմը գլուխգործոց չէ, ես բարձր եմ գնահատում մեր համատեղ աշխատանքը: Մենք ուզում էինք հիշեցնել լսարանին մի ճշմարտություն՝ մարդը դժվար պահերին առաջնորդվում է բարոյական արժեքներով, այդ պատճառով էլ օգնության է գալիս մյուսներին: Այս նախագիծն էլ է մարդկանց մոտեցնում և ոչ միայն կինոարվեստի բնագավառում: Մեր հանդիպումների ժամանակ ոչ միայն միասին աշխատում էինք, այլև հանգստանում, գրուցում, հաց կիսում... Ճիշտն ասած, ես չգիտեմ, թե ինչպես և երբ կլուծվի դարաբաղյան հակամարտությունը մեր երկրների և նույնիսկ մեր միջև: Ես հարցի լուծման իմ տարբերակն ունեմ՝ Կովկասյան միության ստեղծումը:

Երբ սկսեցի թեմաս հետազոտել, շատ ներշնչվեցի, որովհետև ծանոթանում էի հերոսների հետ և աչքիս առաջ կհին էր գալիս... Արդյունքում, ֆիլմը սկզբում հենց մեզ փոխեց: Համենայն դեպս, ինձ վրա այն հաստատ ազդեցություն ունեցավ: Չեմ ասում, որ հենց աղքեջանական ազգի նկատմամբ իմ վերաբերմունքը փոխվեց, բայց մարդասիրությունս երևի ավելացավ: Ու ինձ թվում է՝ դիտողին էլ ֆիլմը հաստատ մի բան կտա: Ինձ այս նախագիծը փորձ տվեց: Ես վավերագրող եմ, ու սովորեցի, թե նման պատմությունների դեպքում ֆիլմը սովորաբար ինչ էլք է ունենում, ինչ տեսանկյունից է պետք դիտարկել այդ ամենը: Ամենակարևորը՝ ֆիլմի միջոցով արտահայտվեցի և այլ ազգի ներկայացուցչի հետ շրջվելու հնարավորություն ստացա: Հասկացա, որ մենք իրար շատ նման ենք:



*Լիանա Սմբատյան
Հայաստան*

ՆՇԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՏԱԿ

Հեղինակներ՝ Ռուզաննա Գիշյան, Այնուր Գարսևա



Դպրոցական տարիքի երեխաները դասի են գնում՝ իմանալով, որ նշանառուն ամեն օր ու ժամ հետևում է իրենց անցուդարձին... Պարզ է, որ սարի հետևում ապրող հարևանների մասին նրանց կարծիքը պատմության դասագրքերով չի ձևավորվում: Հաջողվում է արդյո՞ք այդ երեխաներին որակյալ կրթություն ստանալ, ո՞ր ուսուցիչներն են համաձայնվում աշխատել սահմանամերձ գոտու դպրոցներում, ու՞մ կհաջողվի մայրաքաղաքում բարձրագույն կրթություն ստանալ, և կվերադառնա՞ն այդ երեխաներն իրենց գյուղերը: Այս բոլոր հարցերին պատասխանում են ֆիլմի հերոսները՝ խոսելով իրենց ամենօրյա խնդիրների և ապագայի ծրագրերի մասին:

Այս նախագիծն ինձ համար փոքրիկ կյանք էր, որ մեծ կյանքում ինձ անպայման կօգնի: Այն օգնեց ինձ շփման առումով. տեսա աղբյուրեջանցիներին: Նրանք արդեն աներևույթ



Ռուզաննա Գիշյան
Հայաստան

կամ լրիվ միֆական կերպարներ չէին ինձ համար, մարդիկ էին, որոնց հետ մենք շրփվում էինք: Դե, ճանաչեցինք իրար, տեղեկություններ փոխանակեցինք, փորձեցինք հասկանալ, թե մեզնից

ով ինչպես է մտածում: Իրենք էլ ունեին իրենց հետաքրքրությունները, որոնք շատ հաճախ մնան էին մերին: Երբ դիտում էի իմ գործընկերոջ ուղարկած կադրերը, փորձում էի պատկերացնել, թե ինքն ինչպես է աշխատել, ինչ է զգացել, ինչու է հատկապես այդ կտորներն ընտրել: Եվ ինձ, երևի, հաջողվեց հասկանալ նրան: Ֆիլմը որոշակիորեն մոտեցրեց մեզ, բայց որ ասեմ լիարժեք՝ ճիշտ չի լինի:

Այսպիսի նախագծերը կարող են մեզ ինչ-որ չափով մոտեցնել, բայց միայն այն դեպքում, եթե պատերազմի և հայրենիքի մասին ֆիլմեր չնկարահանվեն: Այն ֆիլմը, որը մենք նկարահանեցինք հայուհու հետ, հենց պատերազմի մասին էր, անվերջ պատերազմի մասին: Սահմանամերձ գոտում ապրող երեխաները, ամեն Աստծո օր դպրոց գնալիս, ենթարկվում են սահմանից այն կողմ գտնվող նշանառուի զենքից գնդակահարվելու վտանգին: Իսկ հետո երեխաները նստում են դասի ու լսում իրենց ուսուցիչների մարդասիրական պատմությունները: Անտանելի տխուր է և ցավալի... Իսկ արվեստի, թատրոնի և ազատ ժամանցի մասին խոսելը հայ հասակակիցների հետ հետաքրքիր էր: Այս իրավիճակը չի փոխվի, քանի դեռ լուծված չէ դարաբաղյան հակամարտությունը:



Այնուր Գարսևա
Ադրբեջան

ՊԱՏԵՐԱԳՄԻ ԶԱՎԱԿՆԵՐԸ

Հեղինակներ՝ Նազրին Մամեդովա, Տիգրան Դանիելյան



Ֆիլմ Ադրբեջանում ծնված հայերի և Հայաստանում ծնված ադրբեջանցիների մասին: Հակամարտությունը ստիպել է մարդկանց հեռանալ իրենց հայրենիքներից, և այդ ժամանակից հետո նրանք էլ չեն եղել իրենց նախկին բնակավայրերում: Ֆիլմի հեղինակները փորձել են ծանոթանալ այդ մարդկանց ճակատագրերին, հասկանալ, թե ինչ են նրանք զգում և ինչ սպասելիքներ ունեն ապագայից: Հեղինակներին հուզող հիմնական հարցն է՝ «կուզե՞ր վերադառնալ այնտեղ, որտեղ ծնվել ես»:



Նազրին Մամեդովա
Ադրբեջան

Մեր ֆիլմի ասելիքն այն է, որ պատերազմը՝ կորուստ է և ցավ, մեզ պետք է միավորվել ընդդեմ դրա: Պատերազմում հաղթողներ և պարտվողներ

չեն լինում, քանի որ երկու կողմերն էլ տուժում են, և ամենաշատը՝ հայրենի հողից կտրված մարդիկ: Այս նախագծի շնորհիվ հասկացա, որ երկու կողմն էլ դեմ չեն մերձեցմանը: Բոլորս էլ կողմ ենք, որ մեր հողերի վրա խաղաղություն լինի: Ես շատ հայրենասեր եմ, չնայած դրան՝ համարում եմ, որ կոնֆլիկտի լուծումը պայմանավորված է կողմերի փոխըմբռնումով: Այս աշխարհը մենք չենք ստեղծել: Մենք ինքներս ավելի լավը պետք է դառնանք, որպեսզի այն էլ ավելի լավը լինի:

Ղարաբաղյան հակամարտությունը լուծել հնարավոր է: Ինչքան էլ ես փորձեմ ու ցանկանամ, գոնե հիմա չգիտեմ այդ հարցի լուծման պատասխանը: Բայց ցանկությունս մեծ է, որ խնդիրը լուծվի, ու ես տեսնեմ իմ ընկերներին՝ թեկուզ Բաքվում, թեկուզ իրենք գան Երևան... Այնպես որ, կարծում եմ, շուտով դրա լուծումը պետք է գտնենք բոլորս միասին: Դա համատեղ ջանքերի միավորում պետք է լինի: Ինչպես մեր ֆիլմերի հերոսների գաղափարները մեկ կետի են հանգում, այնպես էլ մեր բոլորի ցանկությունները խաղաղ ճանապարհով այդ խնդիրը լուծելու ցանկությանը պետք է հանգեն:



Տիգրան Դանիելյան
Հայաստան

ԸՆԿԵՐՆԵՐ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱԼՆԵՐԻ

Հեղինակ՝ Յանա Շախրամանյան



Թրիլիսիում բնակվող հայուհին և աղբբեջանցին, ովքեր, բնականաբար, միմյանցից բաժանված չեն պետական սահմանով, արդեն տասը տարի է՝ լավ ընկերներ են: Միաժամանակ նրանք իրենց համայնքներն են ներկայացնում և նրանց շահերն են պաշտպանում տեղական, տարածաշրջանային և միջազգային կազմակերպություններում: Ավելին, նրանք Վրաստանում ազգային փոքրամասնությունների հարցերով են զբաղվում... Եվ իրենց ընկերության պատմության օրինակով՝ նրանք խոսում են հակամարտության և դրա հաղթահարման մասին:

Ինչ ազդեցություն ունեցավ իմ ֆիլմն ինձ վրա, նույնը կունենա երևի և դիտողի վրա: Չաուրի և Մարիի ընկերությունը սկզբում տարօրինակ էր թվում: Բայց հետո հասկացա, որ իրականում նրանք շատ անկեղծ են: Հայը և աղբբեջանցին ապրում են այլ՝ երրորդ երկրում, և այդ երրորդ երկրի համար նրանք ինչ-որ բան են փորձում անել՝ ազգային փոքրամասնությունների հարցերով են զբաղվում, փորձում են ավելի լավը դարձնել Վրաստանը: Նրանց օրինակը Հարավային Կովկասի խաղաղարար մոդելի պես մի բան է: Անկեղծ ասած, ես երևի դեռ չկարողանամ այնպես ընկերանալ աղբբեջանցու հետ, ինչպես Մարին ու Չաուրն են ընկերություն անում: Ինձ թվում է՝ խնդիրը Հայաստանում ու Աղբբեջանում գտնվելն է: Իրենք երրորդ երկրում են ծնվել, մեծացել: Իրենց համար չկա այդ բաժանումը:



Յանա Շախրամանյան
Հայաստան

Այս նախագծի շնորհիվ իմ մեջ շատ բան փոխվեց, այլ կերպ սկսեցի նայել կյանքին՝ մի քիչ ավելի հասուն, ավելի լայն: Ունեմ ընկերներ, ովքեր ասում են՝ աղբբեջանցիները մեր թշնամիներն են, և այդ պատից այն կողմ ոչինչ չեն տեսնում: Կարող եմ ասել, որ այս նախագծից հետո ես շատ ավելի հայրենասեր դարձա, քան առաջ էի: Ավելի գիտակցված հայրենասեր դարձա: Առաջ եթե «հայրենիք», «պատերազմ», «Արցախ» բառերն ինձ համար ուղղակի խոսքեր էին, ապա հիմա ես ավելի իմաստավորված եմ դրանք արտասանում: Ուզում եմ հիմա ընկերներիս էլ առաջարկել մասնակցել նման նախագծի՝ գուցե իրենց մեջ էլ մի բան փոխվի:



«ԱՅԼ ՀԱՅԱՑՔ» ԾՐԱԳՐԻ ԴԵՐԸ

ՀԱՎԱՍԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Նարայա Միրիանովա



Մպասելիքները կառավարելը սովորաբար դժվար է: Կրկնակի դժվար է հանդիպել «քշևամու» ներկայացուցչին և միասին ստեղծագործական աշխատանք կատարել:

Կատարյալ կլիներ, եթե մարդկանց հետ մեր բոլոր հարաբերությունները դրական բնույթ ունենային: Բայց միամտություն և նույնիսկ սխալ է մտածել, որ եթե հակամարտող կողմերի երիտասարդներին, իրենց ցանկությանը հակառակ, հավաքեն մի տեղում հաղորդակցվելու համար, նրանք մեծ հաճույքով կընդունեն իրար: Նման դեպքերում շատերն, իրականում, փորձում են բարյացակամ լինել միմյանց նկատմամբ, ինչը կարող է հակառակ ազդեցություն ունենալ:

Հակամարտող կողմերի ներկայացուցիչներին միավորող ծրագրերը պետք է մշակել «հաղորդակցության կանխավարկածի» հիման վրա, ըստ որի շփումը զուգորդվում է հավաքական կարծրատիպեր կոտրելու հետ: Ոչ բոլոր հանդիպումների արդյունքում են կարծրատիպեր կոտրվում և իսկական հարաբերություններ ստեղծվում: Հանդիպումների միջոցով հնարավոր է նաև, որ կարծրատիպերը խորանան և բացասական հետևանքների հանգեցնեն: Յուրաքանչյուր հանդիպմանը հարկավոր է ոչ միայն մանրամասն նախապատրաստվել, այլև մտածել արդյունքի ու ծրագրի ապագայի մասին: Հարկավոր է նաև ապահովել հետևյալ նախապայմանները.

- ▶ մասնակիցների հավասար կարգավիճակը,
- ▶ համագործակցային, ոչ մրցակցային հաղորդակցությունը,

- ▶ փոխադարձ կապը և նրպատակների համադրումը, որոնց կարելի է հասնել միայն համագործակցության միջոցով,
- ▶ ստերիմ և կանոնավոր շփումները:

Ավելին, բացասական շփումները կարող են հաստատել գոյություն ունեցող կողմնակալ կարծիքները: «Այլ հայացք»-ի նման ծրագրերը մասնակիցներին բազմաբնույթ հարաբերությունների հնարավորություն են ընձեռում՝ այնպես, ինչպես իրական կյանքում: Սա կարծրատիպերի դեմ պայքարի ամենարդյունավետ միջոցն է, որը հաջողությամբ դառնում է մասնակիցների մտածելակերպը, որովհետև նրանք ուղղակիորեն չեն շփվում կարծրատիպեր ունեցողների հետ: Բազմաթիվ համատեղ աշխատանքները, որոնք սկսվում են դասընթացներով ու քննարկումներով, շարունակվում համատեղ ֆիլմարտադրությամբ և վերջանում փառատոնով, ապահովում են այն տարբեր ձևաչափերը, որոնց միջոցով մարդիկ միմյանց առավել լավ են ճանաչում՝ և՛ որպես անհատ, և՛ որպես մասնագետ:

Համատեղ ֆիլմարտադրությունը ծրագրի ամենախոցելի բաղադրիչն է, որովհետև այդ ընթացքում դրսևորվում են իրական զգացմունքները, կարծիքները, մտավախությունները և հույսերը: Ծրագրի որոշ մասնակիցներ խիզախություն են ունեցել և արտահայտել են դրանք ի լուր աշխարհի, ինչպես օրինակ՝ «Ընկեր: Ծանոթ... Ընկեր» ֆիլմում: Մյուսներն, առավել շրջահայաց լինելով, իրենց և հանդիսատեսի ուշադրությունը շեղել են



հակամարտությունից դեպի արտերկրում տեղի ունեցող իրադարձությունները, ինչպես օրինակ՝ **«Մարների կախարհանքը»** ֆիլմում: Այլ մասնակիցներ հակամարտությանն անդրադարձել են ոչ ավանդական տեսանկյունից, ինչպես օրինակ՝ **«Միրելի բշնամի»** և **«Մեխական, ուրիշի պատերազմը»** ֆիլմերում: Յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է եղել ցուցաբերել մեծ գույշավորություն և ըմբռնում:

Համատեղ արտադրությունը սովորելու արդյունավետ միջոց է, որը խթանում է մասնագիտական և միջանձնային հարաբերությունները: Այս գործընթացը չի կարող հարթ լինել, և ծրագրի հեղինակները, ամեն դեպքում, չպետք է հիասթափվեն, եթե ինչ-որ բան չստացվի:

Համատեղ ֆիլմարտադրության գործընթացում **«հաղորդակցության կանխավարկածը»** ենթադրում է, որ.

- ▶ **Մասնագիտական հաղորդակցությունը** պետք է երկու կողմի համար էլ օգտակար լինի: Սա չի նշանակում, որ երկու հեղինակներն էլ պետք է հավասար գիտելիք և փորձ ունենան: Եթե ծրագրի ավարտին նրանցից յուրաքանչյուրն ասի, որ գործընկերոջից ինչ-որ բան է սովորել, նրանց համատեղ աշխատանքը կարելի է երկու կողմի համար օգտակար համարել:
- ▶ **Անձնական շփումը** պետք է հաճելի լինի: Սա չի նշանակում, որ գործընկերները պետք է համաձայնեն միմյանց հետ վիճելի հարցերում կամ խուսափեն աշխատանքային վեճերից: Նրանք պետք է միմ-

յանց հասկանան, չվիրավորեն և փորձեն գտնել երկու կողմի համար ընդունելի լուծումներ: Համատեղ ֆիլմարտադրության ձևաչափը կարող է սահմանափակել անհատի ստեղծագործական թռիչքն ու երևակայությունը և խթանել պարզունակ, բայց անվտանգ գեղարվեստական ու բովանդակային լուծումներ: Գործընթացի ստեղծագործական բաղադրիչի համակարգումը բարդ է. նպատակն այն է, որ **«մենք»** և **«նրանք»** համատեքստում մասնագիտական ու անձնային հիասթափություններ չլինեն: Այս տեսակետից ծրագրի ղեկավարների խնդիրն է փորձել բարձրացնել մասնակիցների մասնագիտական մակարդակը լրացուցիչ ուսուցման միջոցով՝ ներառյալ աշխատելով սովորելու և գործընկերոջը սովորեցնելու մեթոդները: Հաջող աշխատանքի դեպքում արդյունքը խրախուսական կլինի մասնակիցների և ուշադրության արժանի՝ լսարանի համար:

Համատեղ արտադրության նպատակը ոչ թե օբյեկտիվ պատկերը ներկայացնելն է, այլ հաստատելը երկու կողմերի միջև եղած սուբյեկտիվությունը՝ որպես հակամարտությունների ձևավորման միջոց: **«Ես օբյեկտիվ եմ»** դրույթը ենթադրում է, որ **«դու օբյեկտիվ չես»**: **«Փոքր պատմությունները»**, ի տարբերություն **«մեծ պատմությունների»**, լսարանին հնարավորություն են ընձեռում վերանայելու անցյալը և լուծումների նոր հորիզոններ տեսնելու: Ավելին, նախկինում վերացական և դաժան, միատարր թշնամու փոխարեն բացահայտվում են նոր մարդիկ:



Այս գիրքը պատրաստել է «Ինտերնյուս» մամուլի աջակցության հասարակական կազմակերպությունը «Այլ հայացք» ծրագրի շրջանակում՝ ԱՄՆ խաղաղության ինստիտուտի (USIP) ֆինանսական աջակցությամբ: Գրքում արտահայտված տեսակետները և կարծիքները պարտադիր չէ, որ համընկնեն ԱՄՆ խաղաղության ինստիտուտի տեսակետների հետ:

-
- Խմբագիրներ՝** Նաիրա Մարտիկյան, Նարինե Սաֆարյան,
Հարություն Մանսուրյան, Նաիլյա Յագուբովա
- Թարգմանիչներ՝** Նաիրա Մարտիկյան, Նարինե Սաֆարյան,
Արշալույս Մուրադյան
- DVD արտադրություն՝** Լևոն Տաքսիլդարյան, Արթուր Ներսեսյան
- Լուսանկարիչներ՝** Հակոբ Հովհաննիսյան, Իսմայիլ Իսմայիլով
- Գիզայն և էջադրում՝** Նատալի Հարությունյան
- Նախագծի դեկավարներ՝** Նունե Սարգսյան, Իլիամ Սաֆարով



Այլ հայացք ALTERNATIVE VIEW



DVD PAL

